**ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

# N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 05/22

ք. Գյումրի «10» փետրվարի 2022 թ.

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Ահարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Մարգարիտ Արծրունյանը, ի դեմս Մարգարիտ Արծրունյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ***10*** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***20*** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 611540 /վեց հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր քառասուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության _____*2*_____ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված *2* աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչ և պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ | Ա/Ձ Մարգարիտ Արծրունյան |
| ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2 | ք. Գյումրի Կրուպսկայայի փ 93 |
| ՀՎՀՀ 05536355 | ՀՎՀՀ 87321645 |
| Հ/Հ 9002180005872950 | Հ/Հ 1930045842260100 |
| Գյումրու գանձապետական բաժանմունք | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| ստորագրություն) | ստորագրություն) |
| Տնօրեն՝ Ք. Ահարոնյան | Տնօրեն՝ Մ. Արծրունյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| համարը | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակն ըստ ամիսների | | | | | |
| | | | | | | | | | 2 | 3 | 4 | 5 | 8 | 10 |
| | | **Պատվոգրեր** | | | | | | | | | | | | |
| 1 | 22451190 | Պատվոգիր 21X29.7սմ /180գր քառ.մ/ | Թուղթ A4 ֆորմատի, 15-16 օֆսեթ տպագրության, որակյալ, փայլատ, սպիտակ: 180գ/քմ | հատ | 550 | 11000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 5 | | 15 | | |
| | | Ընդամենը | | | | **11000** | | | | | | | | |
| | | **Թղթե կամ ստվարաթղթե գրանցամատյաններ, հաշվառման գրքեր, արագակարեր ծնաթղթեր և տպագիր գրենական պիտույքների այլ պարագաներ** | | | | | | | | | | | | |
| 2 | 22851100 | Արագակար պարույրով | Թղթապանակ-արագակար պարույրով, A4 ֆորմատի | հատ | 500 | 17500 | 35 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 18 | | 12 | | 5 | |
| 3 | 22851100 | Արագակար կապրոնե | Թղթապանակ-արագակար փափուկ պլաստիկ նյութից, առաջին էջը թափանցիկ A4 ֆորմատի, գունավոր | հատ | 200 | 8000 | 40 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 15 | | | 25 | | |
| 4 | 22851200 | Թղթապանակ կապրոնից A4 /թափանցիկ, կոճգամով/ | Ֆորմատը A4, թղթապանակ-ծրար կոճգամով, թափանցիկ | հատ | 300 | 12000 | 40 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 5 | | 25 | | |
| 5 | 22851200 | Թղթապանակ կոճակով 9.5x6.5սմ | Ֆորմատը A4, թղթապանակ-ծրար կոճգամով, ամուր, հաստ պլաստիկ 9.5x6.5սմ չափերի գրպանիկով | 40 | 400 | 8000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 3 | | 12 | | |
| 6 | 22851200 | Թղթապանակ ֆայլերով 20 էջ | Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, 20 էջ, թափանցիկ ֆայլերով | հատ | 400 | 1200 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | 1 | | |
| 7 | 22851200 | Թղթապանակ ֆայլերով 40էջ | Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, 40էջ, թափանցիկ ֆայլերով | հատ | 500 | 1500 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | 2 | | |
| 8 | 22851200 | Թղթապանակ ֆայլերով 60էջ | Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, 60էջ, թափանցիկ ֆայլերով | հատ | 750 | 2250 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | 2 | | |
| 9 | 22851200 | Թղթապանակ A4 /ռեգիստոր, 27X31սմ/ | Թղթապանակ ռեգիստոր A4 ֆորմատի, երկօղակային, | հատ | 800 | 20000 | 25 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 3 | | 20 | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կողային հաստությունը 80 մմ, կազմը ստվարաթղթից, կազմի հաստությունը 2մմ | | | | | | | | | | | |
| 10 | 22851200 | Նոթատետր զսպանակով A5 | Չափսերը: A5, 128x203 մմ, 56գր/քմ, 70 թերթ, նշումներ կատարելու համար | հատ | 250 | 3750 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 5 | | 10 | | |
| 11 | 22811130 | Տետր A4 ձևաչափի 72 թերթ | Տետր ընդհանուր A4 ֆորմատի, 72 թերթանի, գծավոր, ամրացված պարույրով | հատ | 650 | 9750 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 3 | | 10 | | |
| 12 | 22811130 | Ալբոմ նկարչական /50թերթ/ | Նախատեսված նկարելու համար, 50թերթ, սպիտակ գույն, հաստ կազմով | հատ | 650 | 3250 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 5 | | | | |
| | | Ընդամենը | | | | **87200** | | | | | | | | |
| | | **Արտադրկան հատուկ հագուստ** | | | | | | | | | | | | |
| 13 | 30197620 | Թուղթ A4 ուլտրասպիտակ | Թուղթ A4 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Քաշը 80 գր/մք, տուփի մեջ 500 հատ, ուլտրասպիտակ | տուփ | 2550 | 84150 | 33 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | 6 | | 15 | 2 | |
| 14 | 30197620 | Թուղթ A4 սպիտակ | Թուղթ A4 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Քաշը 80 գր/մք, տուփի մեջ 500 հատ, | տուփ | 2000 | 110000 | 55 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 15 | 12 | | 21 | 7 | |
| 15 | 30197646 | Թուղթ A3 | Թուղթ A3 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Քաշը 80 գր/մք, տուփի մեջ 500 հատ, սպիտակ | տուփ | 4500 | 4500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | | |
| 16 | 30197620 | Թուղթ A4 110գ/Մա | Թուղթ A4 ֆորմատի: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Քաշը 110 գր/մք, 210X297 մմ սպիտակ | հատ | 20 | 5000 | 250 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 250 | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | 30197231 | ֆայլ 70մկր | Թափանցիկ պոլիպրոպիլենային ֆայլեր. կողային անցքերով 70մկր A4 ֆորմատի | հատ | 25 | 12500 | 500 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | 100 | | 200 | 50 | |
| 18 | 30197231 | ֆայլ 40մկր | Թափանցիկ պոլիպրոպիլենային ֆայլեր. կողային անցքերով 40մկր A4 ֆորմատի | հատ | 11 | 6600 | 600 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 100 | 100 | | 300 | 10<br>0 | |
| 19 | 30192114 | Թանաք /30մլ/ | Թանաք կապույտ կնիքի, բարձիկի համար 30մլ | հատ | 200 | 600 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 2 | | |
| 20 | 30192780 | Էջաբաժանիչ /12գույն/ | Պլաստիկ, 12 գունավոր թվային բաժանիչով | հատ | 450 | 5400 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 7 | | 5 | | |
| 21 | 30197638 | Վատման 594x841մմ | Վատման A1 ֆորմատի, սպիտակ, 200գր/մԱ, չափսը 594x841մմ | հատ | 170 | 3400 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | | 7 | 3 | |
| 22 | 30192121 | Գրիչ /կապույտ/ | Կապույտ գնդիկավոր գրիչ, թափանցիկ պլաստմասե կորպուսով 0,7մմ | հատ | 100 | 2000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | | 9 | 1 | |
| 23 | 30192121 | Գրիչ /կարմիր/ | Կարմիր գնդիկավոր գրիչ, թափանցիկ պլաստմասե կորպուսով 0,7մմ | հատ | 100 | 500 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 3 | | | | |
| 24 | 30192121 | Գրիչ /սև/ | Սև գնդիկավոր գրիչ, պլաստմասե իրանով 0,7մմ | հատ | 100 | 400 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 4 | | | | |
| 25 | 30197322 | Ստեպլեր N24/6 HD-45 | Կարիչ N24/6 HD-45: Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 1450 | 2900 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | 1 | | |
| 26 | 30197340 | Ապակարիչ | Մետաղական աշխատանքային մասով և պլաստմասսայե բռնակով գործիք՝ նախատեսված է կարված թղթերը առանձնացնելու համար: | հատ | 350 | 1050 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | 2 | | |
| 27 | 30197112 | Միջուկ ստեպլերի № 24/6 | Կարիչի ասեղ, № 24/6, պատրաստված բարձրորակ պողպատից, փաթեթավորված 1000 հատով ստվարաթղթե տուփերում | տուփ | 170 | 4250 | 25 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 5 | | 15 | | |
| 28 | 30192710 | Սոսինձ 22գր | Սոսինձ-մատիտ չոր, տարողությունը 22գր, սոսնձում է թուղթ, ստվարաթուղթ, նկարներ | հատ | 400 | 10000 | 25 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 5 | | 10 | 5 | |
| 29 | 30192210 | Սկոչ մեծ | Լայն սկոչ | հատ | 450 | 11250 | 25 | ք. Գյումրի | 4 | 5 | | 13 | 3 | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | /48մմ/ | 48մմ*36*40մկմ, գրասենյակային և փաթեթավորման աշխատանքների համար: Սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ: ԳՕՍՏ 20477-86 | | | | | Անի թ. 11փ 5/2 | | | | | | |
| 30 | 30192220 | Սկոչ փոքր /20մմ*36/ | Սկոչ փոքր 20մմ*36*40մկմ գրասենյակային աշխատանքների համար: Սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ: ԳՕՍՏ 20477-86 | հատ | 130 | 3250 | 25 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 5 | | 12 | 3 | |
| 31 | 30199420 | Թուղթ նշումների/ 76,2մմ - 76,2մմ կպչուն/ | Կպչուն թերթիկներ նշումների համար: Կպչուն, գունավոր, չափսերը 76,2մմ - 76,2մմ, 100թերթ | հատ | 200 | 2400 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 3 | | 7 | | |
| 32 | 30199420 | Թուղթ նշումների /38,1մմ - 50,8մմ կպչուն/ | Կպչուն թերթիկներ նշումների համար: Կպչուն, գունավոր, չափսերը 38,1մմ - 50,8մմ, 100 թերթ | հատ | 150 | 1800 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 3 | | 7 | | |
| 33 | 30199420 | Թուղթ նշումների /50,8մմ - 50,8մմ կպչուն/ | Կպչուն թերթիկներ նշումների համար: Կպչուն, գունավոր 50,8մմ - 50,8մմ, 100 թերթ | հատ | 130 | 1430 | 11 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | | | 6 | | |
| 34 | 30194321 | Թուղթ գծագրության 210X297մմ /10հատ/ | Սպիտակ A4 ֆորմատի, նախատեսված գծագրման և էսքիզների համար, 210X297մմ տուփի մեջ 10հատ, չշտամբավորված 200գ/Մա | տուփ | 300 | 6000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 5 | | 8 | 2 | |
| 35 | 30197220 | Ամրակ /100 հատ/ | Ամրակ մետաղական, տուփի մեջ 100 հատ, պատրաստված բարձրորակ մետաղական լարից | տուփ | 150 | 3000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | 3 | | 14 | | |
| 36 | 30197120 | Կոճգամ 50հատ | Կոճգամ մեխիկներ գունավոր, տուփի մեջ 50հատ | տուփ | 250 | 2500 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 4 | | 6 | | |
| 37 | 30192720 | Գծանշիչ /մարկեր գրատախ տակի/ | Մարկերներ գրատախտակի համար | հատ | 200 | 1200 | 6 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | 2 | | 3 | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | 30192720 | Գծանշիչ /մարկեր/ CD, DVD 4գույն/ | Մարկեր տարբեր գույների, նախատեսված CD, DVD սկավառակների համար 4գույն ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով | տուփ | 800 | 3200 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | 2 | | |
| 39 | 30192930 | Քողարկիչ 10մլ | Ուղղիչ գրիչ, օգտագործվում է փոքր սխալները ուղղելու համար 10մլ | հատ | 250 | 3750 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 3 | | 8 | 2 | |
| 40 | 30192100 | Ռետին | Բոլոր տիպի գրաֆիտով գրվածքները ջնջելու համար: | հատ | 200 | 8000 | 40 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 15 | | | 15 | 10 | |
| 41 | 30192123 | Ներկամատիտ /ֆլոմաստեր 12 գույն/ | Գունավոր ֆլոմաստերներ նկարչության համար, փակվում են օդափոխվող գլխիկով, տուփի մեջ 12 հատ, տարբեր գույների | տուփ | 750 | 2250 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 3 | | |
| 42 | 30192131 | Մատիտ սև 2H | Մատիտ սև, տեսակը 2H փայտե, վեցանկյուն կամ կլոր | հատ | 100 | 2000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | | | 10 | | |
| 43 | 30192131 | Մատիտ սև H | Մատիտ սև, տեսակը H փայտե, վեցանկյուն կամ կլոր | հատ | 100 | 2000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | | | 10 | | |
| 44 | 30192131 | Մատիտ սև HB | Մատիտ սև, տեսակը HB փայտե, վեցանկյուն կամ կլոր | հատ | 100 | 2000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | | | 10 | | |
| 45 | 30192131 | Մատիտ սև 2B | Մատիտ սև, տեսակը 2B փայտե, վեցանկյուն կամ կլոր | հատ | 100 | 2000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | | | 10 | | |
| 46 | 30192131 | Մատիտ սև 4B | Մատիտ սև, տեսակը 4B փայտե, վեցանկյուն կամ կլոր | հատ | 100 | 2000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | | | 10 | | |
| 47 | 30192131 | Մատիտ սև 6B | Մատիտ սև, տեսակը 6B փայտե, վեցանկյուն կամ կլոր | հատ | 100 | 2000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | 15 | | | | |
| 48 | 30192133 | Սրիչ | Մետաղյա սրիչ մատիտ սրելու համար | հատ | 200 | 4000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | 5 | | 12 | | |
| 49 | 30192770 | Ծեփ քանդակի /1000գր/ | Փափուկ ծեփ, շագանակագույն, նախատեսված քանդակի համար | կգ | 2200 | 2200 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | | |
| 50 | 30197640 | Թուղթ կրկնօրինակման | Թուղթ սև, կապույտ, նախատեսված է արտատպելու համար | հատ | 20 | 60 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | 1 | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 51 | 30197621 | Թուղթ ֆլիպչարտի 585x810մմ /25թերթ/ | Թուղթ ֆլիպչարտի համար, 25 թերթ, անցքերով, հարմար է սթենդին ամրացնելու համար: Չափսերը 585x810մմ | հատ | 2500 | 7500 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | 1 | | 1 | | |
